մական տեղեկութիւններն էլ գալիս են հաստատելու այս բնական սահմանագծի՝ քաղաքականի հետ նոյն եւ մի լինելը։ Փարպեցին յիշում է Գիւղիկ եւ Վարդաչէն» եւայլն։

Այս է պ. Խաչատրեանի աշխարհատեսութեան արդիւնքը։

* * *

Այժմ թող խօսի մեր հասակաւոր գիրքը, որ քննադատւում է եւ ուր մանրամասն որոշուած է բիւզանդական եւ պարսկական Հայաստանի սահմանագիծը սկսած Նիբիկերտից մինչեւ Ճորոխի հովիտը։

Ահա ինչ է ասուած մեզ զբաղեցնող աշխարհամասի վերաբերեալ.

«Թէոդոսիուպոլսի շրջանում եւ այն կողմը սահմանագիծը անցնում էր այն լեռնաշղթայի վերայից, որ երկարում է Թէոդոսիուպոլսից մինչեւ Ճորոխ գետը — Էրզրումի աջ կողմից բարձրանում են դէպի հիւսիս նախ Դեվէ Բոյունու լեռները, ապա Ղարղաբաղար, որ վերջանում է Կանդիլ գագաթով եւ այստեղից շրջում է դէպի արեւմուտք եւ միանում Դումլու շղթային։ Դումլու ձգւում է Էրզրումի վերեւից եւ շարունակւում է, ուղղուելով դէպի Ճորոխի ափերը Սպերից բարձր։ Սոյն այս գծին յարում էին պարսից կողմից Բասեան եւ Տայոց աշխարհի Բուխա եւ Ոքազ գաւառները, սրանց դէմ ու դէմ հոռոմ բաժնում էր Կարին եւ Շաղագոմ»։

Այնուհետեւ բերւում նոյն պատմական ցուցումները, Դու, Մկնաոիհ, Գիւղիկ, Վարդաչէն, Ծաղիկ գիւղերի վերաբերեալ, սահմանագիծը պատմականօրէն եւս հիմնաւորելու։ (Տե՛ս էջ 22–23, Հայաստանը Յուստինիանի դարում)։

Ի՛նչ զանազանութիւն կայ այս տողերի եւ պ. Խաչատրեանի նկարագրութեան մէջ։ Եւ ոչ մի, թէեւ մէկը գրուած է քսան տարի առաջ «առանց երկիրը տեսած լինելու», իսկ միւսը պատկանում է երկրատես մարդու։ Միակ տարբերութիւնը այն է, որ պ. Խաչատրեան չէ տալիս Դումլի լերան անունը, այլ ծանրանում է նրա արեւմտեան փէշերի վրայ, որ անջատում են Ճորոխի ակունքը Սերչամից եւ սահմանագծի հետ առնչութիւն չունին։

Իրաւունք ունէինք յուսալու, որ Կուշ-Կուշլար լեռների մշտական այցելուն, որ Սանասարեան վարժարանի սաներին անգամ տանում էր հետը «հայրենագիտութեան ծանօթութիւններ ստանալու», դէթ մի հատիկ ծաղիկ բերէր հայ բանասիրութեան այդ լեռների բարձունքից։

Բայց եւ այնպէս պ. Խաչատրեան ներկայացնում է իր տեղագրական նկարագրութիւնը որպէս նորութիւն եւ այդ նկարագրութիւնից հետեւցնում է, որ «Փառանգիոն եւ Բոլոն բերդերը պէտք է փնտռել Թորթում գետի աւազանում», փնտռում եւ գտնում է, որ Վխիկ գետակի հովտում կան Բարդողոս եւ Բուլուլ գիւղերը եւ խորհրդաւոր հարց է տալիս. «Արդեօ՞ք կարելի չէ այդ գիւղերի անուններում վերագտնել մեզ հետաքրքրող բերդերի անունները»։

Կատարեալ անհեթեթութիւն ամէն նկատումով։ Պրոկոպ ասում է, որ Փարանգիոն Ճորոխի ակունքումն է, բայց պ. Խաչատրեան ուզում է, որ Վխիկ գետահովտում լինի։ Փարպեցին ասում է, որ Բողբերդ գտնւում է Բասենում, Խաչատրեանը փոխադրում է բերդը Վխիկ գետի ափը։ Եւ ի՞նչ է պատասխանում Փարպեցուն։

Արդեօք Փարպեցին սխալո՞ւմ է դնելով Բողբերդը Բասենում, խորհում է պ. Խաչատրեան, թէ նոյն անունով երկու բերդ կար՝ Տայքում եւ Բասենում»։

Եւ այս կոչւում է տեղագրական ուսումնասիրութիւն։

Իսկ Բարդողոս եւ Բուլուլ գիւղերը արդեօք ինչո՞վ են յայտնի, որ մեր բանասէրի ուշադրութիւնն են գրաւել։ Անձամբ տեսե՞լ է, գաղափար ունի՞ նրանց դիրքի մասին։ Ո՛չ, նրանց անունները կարդացել է Հ. Սարգսեանի քարտէսի վրայ։ Գոնէ ստուգե՞լ է, իրաւ այդպիսի անուններով գիւղեր կա՞ն։ Դարձեալ ոչ։

Ահա Ռիխարդ Կիպերտի նշանաւոր կարտի վրայ Բարդողոսի փոխարէն կարդացւում է Պարտոնս։ Ո՞րն է ճիշդ։ Ինչո՞ւ է պ. Խաչատրեան կանգ առել այդ երկուսի վրայ, քանի որ Վխիկ գետակի հովտում կան եւ ուրիշ նման գիւղեր զուցէ եւ աւելի յարմար ամրոցային դիրքերով։ Թերեւս այնտեղ ոսկեհանք կայ, որ գայթակղել է պ. Խաչատրեանին։ Ոչ եւ ոչ։ Լոկ լեզուագիտական հաշիւներն են որ բերել են նրան Բարդողոս եւ Բուլուլ գիւղերի մօտ եւ